ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT
OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ Նամակ/150
«22» 01 2021թ.

«ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ (ՀՎՀՀ 01016995) տնօրեն
Վ. Մելիք-Սարգսյանին
հասցե՝ ք. Երևան, Ավան Առինջ 2 մկշր./2/10/39
էլ. հասցե՝ manank2@mail.ru

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ-ի միջև 28.10.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/60-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր)՝ ընկերությունը պարտավորվել է մինչև 2020թ. դեկտեմբերի 10-ը ՀՀ ՊՆ կարիքների համար մատակարարել 33 465.65 մետր երիզներ /Տիսմա 5 սմ լայնքով/, սակայն մինչ օրս ոչ մի մատակարարում չի իրականացրել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԳՀԱՊՁԲ-20-7/60-1 գնման պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՄԱՆԱՆԿ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 16 867 ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 421 667 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 4 216 671.9 ՀՀ դրամ (որակավորման ապահովում):

Ն. ՅՈԼՉՅԱՆ